18.09.26 - 18.09.26
15:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գլխավոր մասնաշենք, 3-րդ հարկ, 301 լսարան

Ս.թ. սեպտեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ին, ԵՊՀ գլխավոր մասնաշենքում ԵՊՀ ակադեմիական գրագիտության կենտրոնի և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) նախաձեռնությամբ տեղի կունենա ԵՊՀ ասպիրանտների և հայցորդների հետ հանդիպում-քննարկում՝ նվիրված մասնագիտական կրթության որակի ապահովման և փորձագիտական գործընթացներում ասպիրանտների, հայցորդների ու երիտասարդ հետազոտողների ներգրավման հնարավորություններին։

Հանդիպման ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու՝

- մասնագիտական կրթության որակի ապահովման հիմնական գործընթացներին,
- ՈԱԱԿ-ի գործունեությանն ու առաքելությանը,
- կրթական ծրագրերի և հաստատությունների որակի գնահատման գործընթացներին,
- ՈԱԱԿ-ի փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններին,
- որպես փորձագետ ներգրավվելու և մասնագիտական համագործակցություն ծավալելու հնարավորություններին։

Հանդիպման բանախոսն է ՈԱԱԿ-ի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Թոփչյանը:

Աշխատանքային լեզուն հայերենն է:

Գրանցումը՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am